

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 37. ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Մաքսային ծառայողների ապօրինի գործողությունների կամ անգործության հետևանքով անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասները (բացառությամբ պետական բյուջե գանձված գումարները պետական բյուջեի մուտքերի համապատասխան հաշիվներից վերադարձնելու դեպքերի) հատուցվում են մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին, իսկ նշված ֆոնդում առկա միջոցների անբավարարության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի այլ միջոցների հաշվին պատճառված վնասի հատուցմանն ուղղված միջոցները վերականգնվում են մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին:

Մաքսային ծառայողների օրինական գործողությունների արդյունքում անձանց պատճառված վնասները փոխհատուցման ենթակա չեն: Մաքսային ծառայողներն իրենց ապօրինի գործողությունների կամ անգործության, ինչպես նաև իրենց կայացրած ապօրինի որոշումների համար կրում են կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Մաքսային մարմնի կամ մաքսային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են գանգատարկվել վերադաս մաքսային մարմնի գանգատարկման հանձնաժողովին կամ բողոքարկվել դատարան:

Մաքսային մարմնի կամ մաքսային ծառայողի գործողությունների, անգործության, ինչպես նաև մաքսային ծառայությանն առնչվող վեճերի լուծման նպատակով վերադաս մաքսային մարմնում մշտապես գործում է գանգատարկման հանձնաժողով:

Մաքսային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Գանգատարկման հանձնաժողով) մաքսային մարմնի ղեկավարի կողմից ձևավորվող, վերադաս մաքսային մարմնում մշտապես գործող մարմին է, որը բաղկացած է նախագահից և ութ անդամից, որոնք իրենց աշխատանքը Հանձնաժողովում համատեղում են զբաղեցրած մաքսային ծառայության պաշտոնների հետ: Գանգատարկման հանձնաժողովի որոշումներն իրավագործ են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է առնվազն 7 հոգի: Որոշումները կայացվում են բաց քվեարկությամբ, պարզ մեծամասնությամբ:

Գանգատարկման հանձնաժողովին դիմում-գանգատ ներկայացրած անձը համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախապես ծանուցվում է: Գանգատարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-գանգատ ներկայացրած անձը և (կամ) վերջինիս լիազորած անձը: Դիմում-գանգատները վերադաս մաքսային մարմնի կողմից քննության են առնվում, որոնց վերաբերյալ դիմում-գանգատի

ընդունման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, ընդունվում են որոշումներ: Առանձին դեպքերում վերադաս մաքսային մարմնի ղեկավարի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 15 օրով, որի մասին իրազեկվում է դիմումատուն: Գանգատարկման հանձնաժողովի նիստի ավարտից հետո գանգատարկման հանձնաժողովը դիմում-գանգատ ներկայացնողին ուղարկում է դիմում-գանգատի վերաբերյալ հանձնաժողովի կայացրած որոշումը:

Գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգը և անհատական կազմը սահմանում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարը:

Գանգատարկման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով:

(37-րդ հոդվածը խմբ., լրաց. 18.11.09 ՀՕ-212-Ն, խմբ. 10.06.13 ՀՕ-69-Ն, լրաց. 17.12.14 ՀՕ-259-Ն)

ՀՈՂՎԱԾ 53. ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴ

Մաքսային վարչարարության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մաքսային ծառայությունում սահմանվում է մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ, որը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող մաքսավճարներից, մաքսային կանոնների խախտումների գործերով նշանակված վարչական տուգանքների երեսուն տոկոս մասնահանումներից, հետբացթողումային հսկողության իրականացման արդյունքում պետական բյուջե գանձվող լրացուցիչ մաքսային վճարների ու դրանց հետ կապված՝ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական պատժամիջոցների տասը տոկոս մասնահանումներից և սույն օրենքի 45-րդ հոդվածի համաձայն կիրառվող տուգանքներից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով մաքսային ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց ներկայացված հետադարձ պահանջների բավարարումից ստացվող գումարները (եթե մաքսային մարմնի կամ մաքսային ծառայողների վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցվել է մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ միջոցների հաշվին):

Մաքսային ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի օգտագործման կարգը, ինչպես նաև ծախսման ուղղությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(53-րդ հոդվածը խմբ. 23.10.08 ՀՕ-175-Ն)